

Խ.Արքայանի անվան ՀՊՄՀ-ի հիմնական դպրոց
Տնօրեն՝
Ն.Տողանյան



Թեմատիկ պլանավորում
«Տեխնոլոգիա»
5-րդ դասարան

2023-2024 Ուստարի
Ուսուցիչ՝ Ֆյորա Մարտիրոսյան

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի թիվ 57 հիմնական դպրոց

Ուսուցիչ՝ Ֆլորա Մարտիրոսյան

Տեխնոլոգիա 5-րդ դասարան

Տարեկան 68 ժամ Շաբաթական 2 դասաժամ

Տեխնոլոգիա 5 ժաննա Ավետիսյան

1. Սննդի պատրաստման տեխնոլոգիա
2. Գրաֆիկա
- 3 Ընտրովի դասեր՝ Ծիածանային ծալադրմում
3. Փայտանյութի մշակման տեխնոլոգիա
4. Հագուստի պատրաստման տեխնոլոգիա
5. Ձեռնարկատիրական գործունեություն
6. Կենցաղային էլեկտրական սարքեր
7. Նյութերի գեղարվեստական մշակում
8. Ստեղծագործական նախագիծ

N	Դաս §	Էջ	Թեմայի անվանումը	Ժամ
ԹԵՄԱ 1.				15
ՄՆՆԴԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ				
Հիմնական նպատակը Ընդլայնել պատկերացումները առողջ սննդի վերաբերյալ, ձևավորել պարզ կերակրատեսակներ պատրաստելու նախնական կարողություններ:				
Վերջնարդյունքներ				

1.Թվարկի, թե որոնք են ածխաջրերի, սպիտակուցների, ճարպերի, վիտամինների, բջջանյութի, հանքանյութերի և ջրի հիմնական գործառնությունները օրգանիզմի համար: Իմանա, թե որ սննդախմբերից կարելի է դրանք ստանալ:

2.Բացատրի օրգանիզմի՝ սննդարար նյութերի պահանջները՝ կախված տարիքից, քաշից և ֆիզիկական ակտիվությունից:

3. Նկարագրի, թե ինչպես են որոշ սննդատեսակներ արտադրական վերամշակումից հետո ամբողջովին փոխվում և՛ բաղադրությամբ, և՛ տեսքով:

4. Կարդա գնված սննդի վրա սննդարարության մասին տեղեկատվությունը, վերլուծի և հասկանա օգտակար և վտանգավոր նյութերի առկայությունը/բացակայությունը: Առաջնորդվելով մականանշմամբ՝ կարողանա ընտրել ավելի առողջ տեսակներ:

6.Տարբերակի ժամկետանց/ անորակ սննդատեսակները: Հասկանա, որ իրենց ու մյուս սպառողների իրավունքն էվերադորձնել հին ապրանքը: Պատրաստ լինել պատասխանել վաճառողի հնարավոր առարկումներին:

7. Ճանաչի դրսում վաճառվող սննդի խնդիրները, հասկանա, թե ինչ հնարավոր վտանգներ կան և ինչ պետք է անել խուսափելու համար:

8.Նկարագրի տարբեր նպատակների համար սեղանի սպասքաղրման կանոնները:

9. Պատրաստի աղցաններ և ձևավոր:

Բովանդակություն

1	1	5	Խոհանոցի կահավորանքը և խնամքը	
2	1	7	Խոհանոցի խնամքը	
3	2	8	Սեղանի սպասքաղրման պարագաներ	

Նպատակն է՝

հաղորդել գիտելիքներ խոհանոցի կահավորանքի և խնամքի մասին:

Վերջնարդյունքներն են՝

Իմանա խոհանոցի կահավորանքի և խնամքի մասին:

4	3	13	Սպասքաղրում : Նախաճաշի և ճաշի սեղանի	
---	---	----	--------------------------------------	--

			սպասքաղրում	
<p>Նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> <input type="checkbox"/> ընդլայնել պատկերացումները սեղանի սպասքաղրման և դրանց տեսակների մասին, <input type="checkbox"/> ձևավորել վարքի կանոններ սեղանի շուրջ: <p>Վերջնարդյունքներն են՝</p> <p>կիրառի ձեռք բերած գիտելիքները՝ սպասքաղրել սեղանը ըստ նշանակության:</p>				
5			Գ/Ա Անձեռցիկի ծալաղրում օրիգամի եղանակով	
6		14	Ընթրիքի և տոնական սեղանի սպասքաղրում	
7		15	Սեղանի օգտվելու կանոնները: Սահիկահանդեսի ցուցաղրում	
8	4	18	Մննդի և սնվելու նշանակությունը	
<p>Նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> <input type="checkbox"/> հաղորդել գիտելիքներ սննդի նշանակության, պահպանման անհրաժեշտության մասին, <input type="checkbox"/> հաղորդել տեղեկություններ սպիտակուցների, ճարպերի, հանքային աղերի, ածխաջրերի, վիտամինների օգտակարության մասին: <p>Վերջնարդյունքներն են՝</p> <p>թվարկի սպիտակուցների, ճարպերի, հանքային աղերի, ածխաջրերի, վիտամինների օգտակար հատ կությունները:</p>				
9			Գ/Ա Ձվով պատրաստել. ճուտիկ, նապաստակ, մկնիկ, խոզուկ	
10	5	22	Առողջ սնունդ, սննդամթերքի պահպանում	
<p>Նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> <input type="checkbox"/> հաղորդել գիտելիքներ առողջ սննդի, նշանակության, պահպանման անհրաժեշտության մասին, 				

<input type="checkbox"/> ծանոթացնել մրգերի և բանջարեղենի մշակմանը ներկայացվող սանիտարահիգիենիկ պահանջներին, <input type="checkbox"/> սովորեցնել բանջարեղենային աղցանների պատրաստման տեխնոլոգիան: Վերջնարդյունքներն են՝ ձեռք բերի պարզ կերակրատեսակներ պատրաստելու նախնական կարողություններ:			
11		23	Մանդամթերքի պահպանումը և դրանց ներկայացվող սանիտարահիգիենիկ պահանջները
12		24	Աղցաններ: Սահիկահանդեսի ցուցադրում
13		25	Գ/Ա Արագ պատրաստվող աղցաններ: Ձևավորում
14	6	27	Դպրոցականի սննդակարգը
Նպատակն է՝ <input type="checkbox"/> ձևավորել պատկերացումներ սննդարար նյութերի, ճիշտ սնվելու անհրաժեշտության մասին, <input type="checkbox"/> ծանոթացնել սննդի սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման կանոններին խանութում և փողոցում, <input type="checkbox"/> ծանոթացնել թունավորումների կանխարգելմանը և առաջին բուժօգնությանը: Վերջնարդյունքներն են՝ <input type="checkbox"/> կարդա, վերլուծի, հասկանա սննդամթերքների մակնշումը, նկարագրի սննդատեսակների երկրորդական մշակման տեսքի և բաղադրության փոփոխությունը:			
15		28	Մանդային թունավորումներ
Առաջարկվող գործունեության ձևեր		Առաջարկվող գործունեության ձևեր	
1.Դասարանում կազմակերպել քննարկում		Օրինաչափություն.	

<p>կապված սննդային մականշումների հետ:</p> <p>Գործնական աշխատանքներ.</p> <p>2. Սեղանի սպասքաղրում:</p> <p>3. Աղցանի պատրաստում և ձևավորում:</p>	<p>Սեղանից օգտվելու կանոնները:</p> <p>Մասշտաբ, համամասնություն, քանակ:</p> <p>Սննդային չափաբաժիններ:</p>
<p>Միջառարկայական կապեր</p>	
<p>Հայոց լեզու - Կարդալ և հասկանալ կարդացածը:</p> <p>Մաթեմատիկա - Կատարել թվաբանական գործողություններ:</p> <p>Առողջ ապրելակերպ-Տարբերակել ընդհանուր և սեփական առողջ ու անառողջ սննդային սովորությունները: Ճանաչել անառողջ սննդային սովորությունների հետևանքները:</p>	
<p>Կապը Հանրակրթության պետական չափորոշիչի հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ</p>	
<p>Հ1, Հ2, Հ29, Հ30, Հ46, Հ51</p>	
<p>ԹԵՄԱ 2.</p>	<p>6 ժամ</p>
<p>ԳՐԱՖԻԿԱ</p>	
<p>Հիմնական նպատակը</p> <p>Ձևավորել գրաֆիկական աշխատանքներ կատարելու հմտություններ, զարգացնել տարածական պատկերացում և ճարտարագիտական մտածելակերպ:</p>	
<p>Վերջնարդյունքներ</p> <p>1. Իմանա՝ գծագրական ստանդարտները, գործիքները, գծերի տեսակները, մասշտաբ:</p> <p>2. Կարողանա կատարել ապարգագույն երկրաչափական կառուցումներ:</p>	

3. Կարողանա գծել որոշ պարզագույն մեխանիկական մասեր:

4. Հասկանա չափադրման հիմնական սկզբունքները:

Բովանդակություն

16	1	30	Գծագրական գիտելիքներ, գործիքներ և պիտույքներ	
17	2	33	Կառուցումներ գծագրական գործիքներով	
18		35	Գ/Ա Հատվածի և շրջանի բաժանումը հավասար մասերի	
19	3	36	Գրաֆիկական պատկերների տեսակները: Սահիկահանդեսի ցուցադրում	
20	4	40	Ստանդարտ գրաֆիկական պատկերներ	
21		42	Տեխնիկական նկար. հատակագիծ	

Նպատակը՝

- հաղորդել տեղեկություններ գրաֆիկայի դերի և նշանակության մասին,
- ծանոթացնել գծագրական նյութերին, պիտույք- ներին և գործիքներին,
- ծանոթացնել գծերի տեսակներին,
- սովորեցնել անել չափանշումներ գծագրական գործիքներով, կառուցել գծագրեր,
- սովորեցնել կատարել պարզագույն երկրաչափա- կան կառուցումներ,
- սովորեցնել հասկանալ և կիրառել էսքիզը, գծա- գիրը, տեխնիկական նկարը, հատակագիծը, սխե- ման, մասշտաբը,

ձևավորել պատկերացումներ ստանդարտների, ստանդարտ գրատեսակների, գծագրի ձևաչափերի և հիմնական մակագրությունների վերաբերյալ:

Վերջնարդյունքները՝

- Ճանաչի, իմանա և կիրառի** գծագրական գոր- ծիքները և պիտույքները,

<ul style="list-style-type: none"> ❑ տարբերի գծերի տեսակները, գրաֆիկական պատկերները՝ էսքիզ, գծագիր, տեխնիկական նկար, հատակագիծ, սխեմա, ❑ կատարի էսքիզ, ❑ զծի երկրաչափական պատկերներ, ❑ տարբերի գծերի տեսակները, ❑ տարբերի ստանդարտ ձևաչափերը, ❑ կիրառի մասշտաբը, <p>կատարի պարզագույն երկրաչափական կառու- ցումներ, հատվածը և շրջանը բաժանի հավասար մասերի</p>	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ- ընդհարնական գաղափարներ
<p>Գործնական աշխատանքներ.</p> <p>1. Աշխատատեղի նախապատրաստում: Ծանոթանալ գծագրական գործիքներին և պիտույքներին: Գծել զուգահեռ և փոխուղղահայաց գծեր:</p> <p>2. A4 ձևաչափի թղթի վրա գծել շրջանակ և հիմնական մակագրությունների աղյուսակը: Սովորել տարբեր գծերի տեսակները, ծնոթանալ գրատեսակներին:</p> <p>3. Կատարել երկրաչափական կառուցումներ՝ հատվածը և շրջանագիծը բաժանել հավասար մասերի:</p> <p>4. Կատարել պարզ էսքիզ (օրինակ՝ գրչամանի, նկարի շրջանակի, հագուստի, կենցաղային առարկաների և այլն): Կատարել գծագրի չափադրում</p>	<p>Օրինաչափություններ .</p> <p>Գծերը կարող են լինել զուգահեռ և ուղղահայաց:</p> <p>Պատկերը բաժանվում է հավասար մասերի օրինաչափությունների կիրառմամբ:</p> <p>Մասշտաբ, համամասնություն, քանակ.</p> <p>Իրական չափերը գծագրի վրա պատկերվում են մասշտաբի օգնությամբ:</p>

Միջառարկայական կապեր			
Հայոց լեզու - Կարդալ և հասկանալ կարդացածը:			
Մաթեմատիկա - Կատարել թվաբանական գործողություններ: Ծանոթ լինել երկրաչափական պատկերներին: Կարողանալ հատվածը կամ շրջանագիծը բաժանել հավասար մասերի: Կերպարվեստ - Ճիշտ օգտվել գծագրական պիտույքներից և գործիքներից: Մատիտով գծել զուգահեռ գծեր:			
Կապը Հանրակրթության պետական չափորոշիչի հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ			
Հ4, Հ4-5, Հ8, Հ46			
ԹԵՄԱ 3.			8 ժամ
ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԵՐ			
ԾԻԱԾԱՆԱՅԻՆ ԾԱԼԱԴՐՄՈՒՄ			
Հիմնական նպատակը			
.Ձևավորել պարուրաձև ծիածանային ծալադրում կատարելու հմտություններ, զարգացնել տարածական պատկերացումն ճարտարագիտական մտածելակերպ:			
Վերջնարդյունքներ			
1. Կարողանալ կատարել պարզագույն երկրաչափական կառուցումներ:			
2. Իմանազծել երկրաչափական պատկերներ՝ քառակուսի, շրջան, ուղղանկյուն, եռանկյուն:			
3. Հասկանալ պատկերների չափադրման հիմնական 3D սկզբունքները, որոնք գտնվում են մեկ ըմպյուսի մեջ:			
4. Կարողանալ կատարել «պատուհանի» պատկերների կտրահանում:			
5. Իմանա ծալադրման պարզագույն կանոնները:			
6. Ինքնուրույն մշակի իրականացնել հանախազծեր:			
Բովանդակություն			
22	1		Ծանոթացնել ծիածանային ծալադրման ստեղծման

		պատմությանը	
23	2	Գգծել 3D դիագրամիով երկրաչափական գծապատկերներ	
24	3	Գ/ Ա A4 ձևաչափի թղթի վրա գծել երկրաչափական պատկերներ: Գծել 3D երկրաչափական կառուցումների մի քանի պատկերներ:	
25	4	Ծանոթացնել գունավոր թղթերի կտրման և ծալադրման հաջորդականությանը	
26	5	Պատկերներ ուրվագծելու և «պատուհան» կտրահանելու հաջորդականության տեխնիկան	
27	6	Գ/ Ա Կատրահանել «պատուհան»:	
28	7	Դիագրամիով գծապատկերի և կտրահանված կաղապարի միավորման հաջորդականության տեխնիկան	
29	8	Ինքնուրույն ստեղծել էսքիզներ, կաշուն ժապավենով գունավոր շերտերը պարուրաձև միացնելով:	
Առաջարկվող գործունեության ձևեր		Խաչվող հասկացություններ	
<p>1. A4 ձևաչափի թղթի վրա գծել երկրաչափական պատկերներ:</p> <p>2. Երկրաչափական պատկերի էջերի վրա նշել 0,5- 2 սմ հեռավորության կետեր, միացնել:</p> <p>3. Գծել 3D երկրաչափական կառուցումների մի քանի պատկերներ:</p> <p>4. Կատարել պատկերների գծագրի ուրվագծելում:</p> <p>5. Կատրահանել «պատուհան»:</p> <p>6. Դիագրամի և «պատուհան» միավորումը:</p>		<p>Օրինաչափություններ:</p> <p>Այն ըստտրված տեխնիկայի օրինաչափության՝ որոշակի անկյանտակ, պարուրաձև պտույտներով ծալված բազմագույն թղթի եռաչափապատկեր է:</p> <p>Օրինաչափությունների կիրառմամբ պատկերը բաժանվում է հավասար մասերի:</p> <p>«Պատուհանները» ըստ օրինաչափության պետք է լինեն կենտրոնում:</p> <p>Համամասնություն և քանակ: Այս</p>	

<p>7. Շերտերի պարուրաձև շարժման միացնելու հաջորդականությունը:</p> <p>8. Պատրաստի արտադրանքի դարձերեսի մշակում:</p>	<p>տեխնիկան բավականին պարզ և հետաքրքիր է, ստացված պատկերը աչքի է ընկնում ծավալով և պայծառտարածական լուծումով:</p> <p>Չափերը գծագրի վրա պատկերվում են 3D գծանշման օգնությամբ, հաշվարկով:</p>
<p>Միջառարկայական կապեր.</p>	
<p>Հայոց լեզու: Կարողանա կարդալ և հասկանալ կարդացածը:</p> <p>Մաթեմատիկա: Կարողանա կատարել թվաբանական գործողություններ:</p> <p>Օտար լեզու: Կարողանա կարդալ և հասկանալ տեխնիկական փաստաթղթերը:</p> <p>Կերպարվեստ: Կառուցի համաչափ պատկերներ, ընտրի ներդաշնակ գույներ:</p>	
<p>Կապը Հանրակրթության պետական չափորոշիչի հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ</p>	
<p>Հ1, Հ2, Հ4, Հ47, Հ52, Հ53</p>	
<p>ԹԵՄԱ 4</p>	<p>6 ժամ</p>
<p>ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ</p>	
<p>Հիմնական նպատակը</p>	
<p>Ձևավորել փայտանյութի տեսակները տարբերակելու և գործնականում ճիշտ կիրառելու, փայտանյութից իրի պատրաստման տեխնոլոգիական քարտ կազմելու հմտություններ: Ընդլայնել գիտելիքները որոշ ձեռքի գործիքների և հարմարանքների մասին, ձևավորել դրանցով անվտանգ աշխատելու կարողություններ:</p>	
<p>Վերջնարդյունքներ</p>	
<p>Տարբերի փայտանյութի տեսակները և ներկայացնի , թե ինչպես կարելի է օգտագործել առօրյա կյանքում:</p> <p>Դասակարգի փայտանյութերն ըստ հատկությունների և ծագման:</p> <p>Հետազոտի և թվարկի փայտանյութերի արատները, ֆիզիկական ,</p>	

մեխանիկական և տեխնոլոգիական հատկությունները:

Ներկայացնի գործիքներով անվտանգ աշխատելու կանոնները:

Բացատրի փայտամշակման ձեռքի գործիքների նշանակությունը և օգտագործման ձևերը:

Ընտրի համապատասխան գործիքներ և սարքավորումներ փայտանյութով աշխատելու համար, կատարի փայտամշակման պարզ աշխատանքներ:

Բովանդակություն

30	1	45	Փայտանյութի տեսակները	
31	2	48	Փայտանյութի հատկությունները: Սահիկահանդեսի ցուցադրում	
32	3	51	Սղոցանյութեր, տեսակները	
33	4	53	Գ/Ա Շինվածքների պատրաստման տեխնոլոգիական գործընթաց , տեխնոլոգիական քարտ	
34	5	56	Աշխատատեղ, աշխատանքի անվտանգության կանոններ	
35	6	58	Փայտանյութի մշակումը	

Նպատակը՝

ձևավորել փայտանյութի տեսակները, արատ- ները տարբերակելու, գործնականում դրանք ճիշտ կիրառելու կարողություն, ծանոթացնել սղոցանյութերին, դրանց տեսակ- ներին, ստացման եղանակներին, ձևավորել փայտանյութից իրի պատրաստման տեխնոլոգիական քարտ կազմելու հմտություններ, ընդլայնել գիտելիքները որոշ ձեռքի գործիքների և հարմարանքների մասին, ձևավորել դրանցով անվտանգ աշխատելու կարողություններ, ծանոթացնել փայտե իրերի վերջնամշակման աշխատանքներին:

Վերջնարդյունքները՝

- տարբերի** փայտանյութի տեսակները, արատները,
- իմանա** սղոցանյութերը, դրանց տեսակները, ստացման եղանակները,
- դասակարգի** փայտանյութերը ըստ իրենց հատկությունների և ծագման,
- հետազոտի** և թվարկի փայտանյութերի արատները, ֆիզիկական, մեխանիկական և տեխնոլոգիական հատկությունները,
- կազմի** փայտանյութից իրերի պատրաստման տեխնոլոգիական քարտ,
- ներկայացնի** գործիքներով անվտանգ աշխատելու կանոնները,
- բացատրի** փայտամշակման ձեռքի գործիքների նշանակությունը և օգտագործման ձևերը,
- ընտրի** համապատասխան գործիքներ և սարքավորումներ փայտանյութով աշխատելու համար,

կատարի վերջնամշակման աշխատանքներ:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<p>Գործնական աշխատանքներ .</p> <ol style="list-style-type: none"> 1. Փայտանյութի տեսակները և հատկությունները: Փայտանյութի արատների որոշում: 2. Սղոցանյութեր, դրանց տեսակները: 3. Փայտանյութից իրի պատրաստման տեխնոլոգիական քարտի կազմում: 4. Աշխատատեղի կազմակերպում, ծանոթացում աշխատանքի անվտանգության կանոններին: 5. Փայտանյութի մշակումը ձեռքի գործիքներով: 	<p>Օրինաչափություններ .</p> <p>Սովորողները կարողանում են դասակարգել նյութերը՝ հաշվի առնելով օրինաչափությունները:</p> <p>Մասշտաբ, համամասնություն, քանակ.</p> <p>Նյութերի հատկություններն ուսումնասիրելիս սովորողները կատարում են չափումներ, օգտվում սանդղակներից:</p> <p>Պատճառ և հետևանք.</p> <p>Նյութի հատկությունները կախված են նրա կառուցվածքից:</p>
<p>Միջառարկայական կապեր</p>	

Հայոց լեզու - Կարդալ և հասկանալ կարդացածը:			
Մաթեմատիկա - Կատարել թվաբանական գործողություններ:			
Բնագիտություն - Իմանալ ծառերի տեսակները և բնափայտի կառուցվածքն ու հատկությունները:			
Կապը Հանրակրթության պետական չափորոշիչի հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ			
Հ1, Հ4, Հ10, Հ32, Հ46			
ԹԵՄԱ 5.			16 ժամ
ՀԱԳՈՒՍՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ			
Հիմնական նպատակը			
Ընդլայնել գիտելիքներ բնական և արհեստական գործվածքների մասին, ձևավորել պարզագույն կար ու ձևի հմտություններ:			
Վերջնարդյունքներ			
<ol style="list-style-type: none"> 1. Տարբերակի մանրաթելերի տեսակները և դրանց ստացման տեխնոլոգիաները: 2. Դասակարգի գործվածքները, ներկայացնի դրանց հատկությունները: 3. Օգտվի կարելու համար նախատեսված գործիքներից և հարմարանքներից: 4. Ներկայացնի ձեռքի կարատեսակների կատարման տեխնիկան: 5. Ներկայացնի հագուստի համար անհրաժեշտ չափսերի որոշման ընթացքը: 6. Նախագծի և պատրաստի ձևաններ՝ հագուստի պարզ տեսակներըի համար: 7. Կարի հագուստի պարզ տեսակները: 			
Բովանդակություն			
36	1	63	Նյութագիտություն .

37			Ֆիլմերի դիտում մանրաթելերի ստացման մասին	
38		64	Նյութագիտության տարրեր	
39	2	67	Գործվածք	
40	3	65	Գործիքներ և սարքավորումներ Սահիկահանդեսի ցուցադրում	
41	4	72	Ձեռքի կարատեսակներ	
42			Գ/Ա Ձեռքի կարատեսակներ՝ շուլալակար, փոթակաթ, վրածալ կար	
43			Գ/Ա Ձեռքի կարատեսակներ՝ մաքրակար, օղակակար, հետկար	
44			Գ/Ա Ձեռքի կարատեսակներ՝ շղթայակար, կրկնակար, Սվազի կար	
45	5	74	Կարվածքի գծագրի կառուցում	
46		75	Մարմնակազմվածքից չափսեր վերցնելու ձևերը	
47			Գոզնոցի պատմություն: Սահիկահանդեսի ցուցադրում	
48		76	Կասագոզնոցի գծագիր	
49		77	Գ/Ա Ձևանների պատրաստում	
50	6	78	Գործվածքի մշակման տեխնոլոգիա: Գործվածքի ձևում	
51		79	Կարվածքի մշակման տեխնոլոգիա	
Նպատակը՝				
<input type="checkbox"/> խթանել հետաքրքրասիրությունը և հաղորդել գիտելիքներ տեքստիլ				

մանրաթելերի մասին,

- ծանոթացնել բուսական և կենդանական ծագում ունեցող մանրաթելերի տեսակներին,
- ծանոթացնել գործվածքի հյուսքի տեսակներին՝ քաթանահյուսքին,
- սովորեցնել տարբերակել գործվածքի թարս և շիտակ կողմերը,
- ծանոթացնել հենքաթելի և միջնաթելի նշանակությանը,
- ձևավորել պատկերացումներ մանրաթելերից մինչև գործվածքի ստացման տեխնոլոգիական մշակման գործընթացի վերաբերյալ:

Գործվածք և կարվածք

- սովորեցնել կարելու համար նախատեսված գործիքներից և հարմարանքներից օգտվելու ձևերը,
- սովորեցնել պարզ կարվածքի համար չափսեր վերցնելը,
- սովորեցնել ուղղանկյունաձև կարվածքների գծագրի կառուցումը, ձևանի պատրաստումը, գործվածքի ձևելը և կարելը,
- սովորեցնել ձեռքի կարերի կատարման տեխնիկան,

տեղեկացնել կարվածքի վերջնամշակմանը ներկայացվող պահանջներին:

Վերջնարդյունքները՝

- դասակարգի** գործվածքները՝ ըստ մանրաթելա- յին ծագման,
- օգտվի** կարելու համար նախատեսված աշխատանքային գործիքներից և հարմարանքներից,
- կարի** պարզ ուղղանկյունաձև կարվածքներ,
- կատարի** կարվածքի համար համապատասխան գործվածքի ընտրություն,
- իմանա** խոնավաջերմային մշակման կանոնները,

պահպանի աշխատանքային գործիքներից և հարմարանքներից ավտանգ օգտվելու կանոնները:

Առաջարկվող գործունեության ձևեր

Խաչվող հասկացություններ

<p>Գործնական աշխատանքներ .</p> <p>1.Գործվածքի տեսակների ևհատկությունների ուսումնասիրում:</p> <p>2. Ձեռքի կարերի կատարում նմուշների վրա:</p> <p>3. Ուղղանկյունաձև կարվածքների գծագրի կառուցում:</p> <p>4.Հագուստի պարզ տեսակի կարում (գլխաշոր,, գոգնոց....):</p>	<p>Մասշտաբ, համամասնություն, քանակ.</p> <p>Հագուստի գծագրի կառուցումը կատարվում է մասշտաբի կիրառմամբ:</p> <p>Անհատական և մշակութային արժեհամակարգ.</p> <p>Հագուստի պատրաստման գործընթացն առնչվում է ստեղծագործությանը և մշակույթին:</p>
<p>Միջառարկայական կապեր</p>	
<p>Հայոց լեզու - Կարդալ և հասկանալ կարդացածը: Մաթեմատիկա - Կատարել թվաբանական գործողություններ: Կերպարվեստ – կատարել էսքիզ, գծել հագուստի գծագիրը, ընտրել կտորի գույնը:</p>	
<p>Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ</p>	
<p>Հ4, Հ8, Հ28, Հ30, Հ32, Հ45,Հ46, Հ51</p>	
<p>ԹԵՄԱ 6.</p>	<p>3 ժամ</p>
<p>ԿԵՆՏԱՂԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԵՐ</p>	
<p>Հիմնական նպատակը</p>	
<p>Զարգացնել կենցաղային էլեկտրական սարքերի ճիշտ շահագործելու հմտություններ:</p>	
<p>Վերջնարդյունքներ</p>	
<p>1. Թվարկի էլեկտրական էներգիայի ստացման հիմնական աղբյուրները: 2. Ներկայացնի կենցաղում օգտագործվող սարքերը: 3. Տեղյակ լինի տեխնոլոգիայի կիրառմամբ տան խնդիրների լուծման</p>	

մասին:			
4. Թվարկի էլեկտրական շղթայի տարրերը, տարրերի դրանց պայմանական նշանները սխեմայի վրա:			
Հավաքի պարզագույն էլեկտրական շղթա:			
Բովանդակություն			
52	1	81	Էլեկտրական էներգիայի աղբյուրները
53			Սահիկահանդեսի ցուցադրում՝ էներգիայի աղբյուրներից անվտանգ օգտվելու կանոնները
54	2	84	Կենցաղային էլեկտրական սարքեր
<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> <input type="checkbox"/> հաղորդել գիտելիքներ էներգիայի ստացման հիմնական աղբյուրների մասին, <input type="checkbox"/> սովորեցնել ինքնուրույն կազմել պարզագույն էլեկտրական շղթայի սխեմա, <input type="checkbox"/> սովորեցնել կենցաղային էլեկտրական սարքերից անվտանգ օգտվելու կանոնները, <input type="checkbox"/> զարգացնել կենցաղային էլեկտրական սարքերը ճիշտ շահագործելու հմտություններ, <input type="checkbox"/> հաղորդել գիտելիքներ խոհանոցային և կենցաղային էլեկտրական սարքավորումների տեսակները ճիշտ շահագործելու մասին, <p>դաստիարակել համագործակցություն աշխատանքային գործընթացում:</p>			
<p>Վերջնարդյունքները՝</p> <ul style="list-style-type: none"> <input type="checkbox"/> թվարկի էլեկտրական էներգիայի ստացման հիմնական աղբյուրները, <input type="checkbox"/> թվարկի էլեկտրական շղթայի տարրերը, <input type="checkbox"/> տարրերի դրանց պայմանական նշանները սխեմայի վրա, <input type="checkbox"/> ներկայացնի կենցաղում օգտագործվող սարքերը, <input type="checkbox"/> իմանա կենցաղային էլեկտրական սարքերի անվտանգության կանոնները, 			

կարողանա կիրառել:	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
Գործնական աշխատանքներ . 1. Կարդալ և բացատրել կենցաղային սարքերի տեխնիկական փաստաթղթերը: 2. Հավաքել պարզագույն էլեկտրական շղթա:	Էներգիա, նյութեր . Էներգիան նյութերի հիմնական հատկություններից մեկն է, նրա շարժման չափը, շարժման հզորությունը՝ ուժը (ջերմության, լույսի, էլեկտրականության, մեխանիկական շարժման ձևով): Պատճառ և հետևանք. Կենցաղային էլեկտրական սարքերն աշխատում են էլեկտրական էներգիայի շնորհիվ:
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու - Կարդալ և հասկանալ կարդացածը: Օտար լեզու – Կարդալ և հասկանալ կենցաղային սարքերի փաստաթղթերում գրված կարևոր ցուցումները: Մաթեմատիկա - Կատարել թվաբանական գործողություններ: Բնագիտություն – Հասկանալ էլեկտրական հոսանքի բնութագրերը:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշիչի հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ	
Հ1, Հ3, Հ4, Հ10, Հ28, Հ30, Հ46	
ԹԵՄԱ 7.	7 ժամ
ՆՅՈՒԹԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄ	
Հիմնական նպատակը	
Զնավորել գեղագիտական ճաշակ և ստեղծարարություն, զարգացնել փայտի և գործվածքի օգնությամբ գեղարվեստական իրեր պատրաստելու հմտություններ:	

Վերջնարդյունքներ			
1. Ներկայացնի Հայաստանում գեղարվեստական արհեստների զարգացման պատմությունը:			
2. Տարբերի դեկորատիվ ներկերի տեսակները:			
3. Փայտի վրա կատարի գեղարվեստական նախշագարդում՝ դեկորատիվ ներկերի կամ խարափորագրիչի օգնությամբ:			
4. Գործվածքից պատրաստի փափուկ խաղալիք կամ որևէ օգտակար իր:			
5. Տեղյակ լինի փափուկ խաղալիքների համար առավել կիրառվող կարատեսակներին:			
Բովանդակություն			
55	1	89	Գեղարվեստական արհեստները Հայաստանում
56	1	98	Փափուկ խաղալիքներ: Սահիկահանդեսի ցուցադրում
57		99	Անհրաժեշտ նյութերը և միջոցները
58	2	102	Գ/ Ա ձևանների մշակման տեխնոլոգիան
59		103	Փափուկ խաղալիքի ձևանների պատրաստումը
60	3	105	Գ/ Ա Գործվածքի մշակում: Ձևում: Կարում
61		106	Գործվածքե ձևանների միացում
Նպատակը՝			
<input type="checkbox"/> ձևավորել գեղագիտական ճաշակ և ստեղծարարություն, <input type="checkbox"/> զարգացնել գործվածքի օգնությամբ գեղարվեստական իրեր պատրաստելու հմտություններ:			
Վերջնարդյունքները՝			
<input type="checkbox"/> ներկայացնի Հայաստանում գեղարվեստական արհեստների զարգացման պատմությունը, <input type="checkbox"/> կատարի գործվածքի վրա գեղարվեստական նախշագարդում՝ բատիկայի			

ներկերի օգնությամբ,

պատրաստի գործվածքից փափուկ խաղալիք կամ որևէ օգտակար իր:

Նպատակը՝

- ծանոթացնել ինքնաշեն փափուկ խաղալիքների պատրաստման հնարներին,
- սովորեցնել թղթե և գործվածքե ձևանների մշակման՝ եզրագծման, կտրման, կտրահանման տեխնոլոգիայի հաջորդականությունը,
- զարգացնել գործվածքի մշակման հմտություններ՝ գծանշել ձևանի օգնությամբ, կտրել, կտրահանել, կարել,
- ընդլայնել սովորողների պատկերացումները խաղալիքների մասին,
- դաստիարակել հոգատար, ուշադիր և կոկիկ վերաբերմունք կատարած աշխատանքի նկատմամբ,
- դաստիարակել համագործակցություն աշխատանքային գործընթացում:

Վերջնարդյունքները՝

- իմանա** ինքնաշեն փափուկ խաղալիքների էսքիզի մշակման, թղթե դետալների եզրագծման, կտրման, կտրահանման տեխնոլոգիան,
- կարողանա** ստանալ էսքիզը, գործվածքե ձևան ները,
- մշակի** ձևանների առանձին մասերը,
- կարի** համապատասխան կարատեսակներով,
- կզարգանա** ստեղծագործական մտածողությունը և գեղագիտական ճաշակը

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
Գործնական աշխատանքներ . 1. Փայտի գեղարվեստական նկարագարողում և խարափորագրում: 2. Գործվածքից օգտակար իրի	Անհատական և մշակութային արժեհամակարգ. Նյութերի գեղարվեստական մշակումն իրենից ներկայացնում է

պատրաստում:		ստեղծարարություն:	
3. Փափուկ խաղալիքի պատրաստում:			
Միջառարկայական կապեր			
Հայոց լեզու - Կարդալ և հասկանալ կարդացածը: Մաթեմատիկա - Կատարել թվաբանական գործողություններ: Կերպարվեստ – Կատարել էսքիզ, գծել ձևանի գծագիրը, ընտրել կտորի գույնը:			
Կապը Հանրակրթության պետական չափորոշիչի հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ			
Հ1, Հ4, Հ5, Հ28, Հ42, Հ43, Հ45, Հ46, Հ51			
ԹԵՄԱ 8			4 ժամ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ			
Հիմնական նպատակը			
Ձևավորել նախագծային և հետազոտական գործունեության մշակույթ, զարգացնել ինքնուրույն որոշումներ կայացնելու պատրաստակամությունը:			
Վերջնարդյունքներ			
Կատարի ստեղծագործական նախագիծ՝ խմբային կամ անհատական:			
Բովանդակություն			
62	1	111	Նախագծային մտածելակերպ
63		112	Նախագծի թեմայի ընտրություն
64	2	115	Նախագծի հիմնական փուլերը
65		118	Գ/ Ա Նախագծի ներկայացում
Նպատակը՝			
<input type="checkbox"/> ծանոթացնել նախագծի հիմնական փուլերին, <input type="checkbox"/> զարգացնել ինքնուրույն որոշումներ կայացնելու պատրաստակամությունը,			

<ul style="list-style-type: none"> <input type="checkbox"/> ձևավորել նախագծային և հետազոտական գործունեության մշակույթ, <input type="checkbox"/> սովորեցնել ստեղծագործական նախագիծ կազմելու հնարները, <input type="checkbox"/> ձևավորել նախագծի պաշտպանության կարո դրություն: 	
<p>Վերջնարդյունքները՝</p> <ul style="list-style-type: none"> <input type="checkbox"/> կազմի ստեղծագործական նախագիծ՝ խմբային կամ անհատական, <input type="checkbox"/> իմանա նախագծի հիմնական փուլերի մասին, <input type="checkbox"/> իմանա ստեղծագործական նախագիծ կազմելու սկզբունքները, <p>կատարի նախագծի պաշտպանություն:</p>	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
Ստեղծագործական նախագծի կատարում և պաշտպանություն:	Պատճառ և հետևանք . յուրաքանչյուր իրի ստեղծմանը նախորդել է որոշակի իրավիճակ, որն առաջացրել է դրա նախագծման և պատրաստման անհրաժեշտությունը:
Միջառարկայական կապեր	
<p>Հայոց լեզու - Կարդալ և հասկանալ կարդացածը:</p> <p>ԹԳՆՀԳ- Համացանցում փնտրել և գտնել անհրաժեշտ տեղեկատվություն:</p> <p>Օտար լեզու - Կարդալ և հասկանալ կարդացածը:</p> <p>Մաթեմատիկա - Կատարել թվաբանական գործողություններ:</p> <p>Կերպարվեստ – կատարել էսքիզ, գծագիր:</p>	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ	
Հ1, Հ4, Հ7, Հ10, Հ12, Հ28, Հ31, Հ32, Հ34	
ԹԵՄԱ 9	3

			Ժամ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ			
Հիմնական նպատակը			
Ձևավորել ձեռնարկատիրական գործունեության մասին գիտելիքներ, արտադրության գործոնները տարբերակելու հմտություններ:			
Վերջնարդյունքներ			
<ol style="list-style-type: none"> 1. Հասկանա , թե ինչ է ձեռնարկատիրական գործունեությունը: 2. Կարողանա բերել գաղափարների օրինակներ, որոնք կարող են եկամտի աղբյուր դառնալ: 3. Հասկանա արտադրության գործոնները: 4. Գիտակցի և գնահատի աշխատանքային ռեսուրսների դերը: 5. Գիտակցի և գնահատի կապիտալ ռեսուրսների դերը երկրի բարեկեցության համար: 6. Գիտակցի և գնահատի բնական ռեսուրսների դերը: 			
Բովանդակություն			
66	1	119	Ձեռնարկատիրական գործունեություն
67	2	123	Արտադրության գործոններ
68			Աշխատանքային և բնական ռեսուրսներ
Նպատակը՝			
<input type="checkbox"/> ձևավորել ձեռնարկատիրական գործունեության մասին գիտելիքներ, ձևավորել արտադրության գործոնները տարբերակելու հմտություններ:			
Վերջնարդյունքները՝			
հասկանա , թե ինչ է ձեռնարկատիրական գործունեությունը,			
կարողանա բերել գաղափարների օրինակներ, որոնք կարող են եկամտի աղբյուր դառնալ,			

<p>իմանա արտադրության գործոնները,</p> <p>գիտակցի և գնահատի աշխատանքային ռե- սուրսների դերը՝ որպես արտադրության առաջին գործոն,</p> <p>գիտակցի և գնահատի կապիտալ ռեսուրսների դերը՝ որպես արտադրության երկրորդ գործոն,</p> <p>գիտակցի և գնահատի բնական ռեսուրսները՝ որպես արտադրության երրորդ գործոն,</p> <p>իմանա, որ ձեռնարկատերը արտադրության չորրորդ գործոն է:</p>	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
Ստեղծագործական նախագծի կատարում և պաշտպանություն:	Պատճառ և հետևանք . յուրաքանչյուր իրի ստեղծմանը նախորդել է որոշակի իրավիճակ, որն առաջացրել է դրա նախագծման և պատրաստման անհրաժեշտությունը:
Միջառարկայական կապեր	
<p>Հայոց լեզու - Կարդալ և հասկանալ կարդացածը:</p> <p>ԹԳևՀԳ- Համացանցում փնտրել և գտնել անհրաժեշտ տեղեկատվություն:</p> <p>Օտար լեզու - Կարդալ և հասկանալ կարդացածը:</p> <p>Մաթեմատիկա - Կատարել թվաբանական գործողություններ:</p> <p>Կերպարվեստ – կատարել էսքիզ, գծագիր:</p>	
Կապը Հանրակրթության պետական չափորոշիչի հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ	
Հ1, Հ4, Հ7, Հ10, Հ12, Հ28, Հ31, Հ32, Հ34	
ԹԵՄԱ 9.	
ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԵՐ	